

Հայտարարություն քաղաքացիական ակտիվիստներին ահաբեկելու կապակցությամբ

Սեպտեմբերի 6, 2013

2013 թվականի սեպտեմբերի 5-ի երեկոյան ժամը 22:10-22:20-ի հատվածում, Երեւանի Կոդբացու փողոցի բակերից մեկում, ՊԵԿ-ի շենքից մի քանի քայլ հեռավորությամբ, իր ավտոտնակի մոտ, 6-7 անհայտ անձանց կողմից դաժան ծեծի են ենթարկվել Երեւանի մամուլի ակումբի ծրագրերի համակարգող Հայկակ Արշամյանը եւ «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» հակակոռուպցիոն կենտրոնի խորհրդի անդամ Սուրեն Սաղաթեյանը: Վերջիններս ծանր մարմնական վնասվածքներով, սալջարդերով եւ կոտրվածքներով տեղափոխվել են հիվանդանոց: Այս երկու հասարակական ակտիվիստները հրապարակային գործիչներ են եւ իրենց հասարակական գործունեությունն իրականացնում են օրինականության շրջանակներում:

Երեւանի մամուլի ակումբը եւ «Թրանսփարենսի Ինթերնեյշնլ» հակակոռուպցիոն կենտրոնն ակտիվորեն ներգրավված են ԵՄ Արեւելյան գործընկերության Քաղաքացիական հասարակության ֆորումի աշխատանքներում: Հայկակ Արշամյանը վերջին երկու օրերին մասնակցել է ՀՀ նախագահի նստավայրի եւ ՀՀԿ կենտրոնակայանի առջեւ անցկացված հասարակական ակտիվ բողոքի ակցիաներին՝ ուղղված Մերժ Սարգսյանի կողմից Մոսկվայում արած այն հայտարարության դեմ, ըստ որի, Հայաստանը որոշել է միանալ մաքսային միությանը:

Մենք՝ ստորեւ ստորագրողներս, տեղի ունեցածը գնահատում ենք որպես ահաբեկչություն՝ ՀՀ իշխանությունների դեմ իրենց բողոքը հայտնող հասարակական կազմակերպությունների, ազատ մամուլի, հասարակական գործիչների եւ ակտիվ քաղաքացիների նկատմամբ, սա համարում ենք Հայաստանում տիրող անպատժելիության մթնոլորտի արդյունք, մարդու իրավունքների ռոնահարման, օրենքի ընտրովի կիրառման եւ քաղաքական հետապնդման ամենօրյա պրակտիկայի շարունակություն, ինչի դրսևորումներից մի քանիսին ականատես ենք եղել նաեւ վերջին շրջանում՝ Երեւանի Կոմիտասի 5 հասցեի շինարարության դեմ եւ քաղաքապետարանի դիմաց ցուցարարների դեմ կիրառված բռնաճնշումների ժամանակ:

Հայտարարում ենք, որ տեղի ունեցած այս ահաբեկչության ամբողջ պատասխանատվությունն ընկնում է ՀՀ իշխանությունների, մասնավորաբար՝ ՀՀ իրավապահ մարմինների վրա: Եթե այս հանցագործությունը շուտափույթ չբացահայտվի, հիմքեր կունենանք հայտարարելու, որ այս բռնարարքն ուղղակիորեն հովանավորվում է Հայաստանի իշխանությունների կողմից:

Քաղաքացիական հասարակությանը եւ բոլոր ազատ քաղաքացիներին կոչ ենք անում գոտեպնդվել, չընկրկել վարձու խուժանի եւ սրանց պատվիրատուների առջեւ, շարունակել պայքարել սեփական ազատությունների եւ իրավունքների համար:

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ
 Երեւանի մամուլի ակումբ
 «Սպառողների իրավունքների պաշտպանություն» ՀԿ
 Եվրասիա համագործակցություն հիմնադրամ
 Մեդիա նախաձեռնությունների կենտրոն (նախկին «Ինտերնյուս-Հայաստան»)
 Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան
 Բազմակողմանի տեղեկատվության ինստիտուտ-Հայաստան ՀԿ
 «Շիրակ կենտրոն» ՀԿ
 «Մենք Պլյուս» ՀԿ
 «Կրթության ասպարեզ» ՀԿ
 Մարտունու կանանց համայնքային խորհուրդ ՀԿ
 Հայաստանի հելսինկյան կոմիտե
 «Տրտու» ՀԿ
 «Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամ
 «Պետական կարիքների գոհեր» ՀԿ
 Քաղաքացիական ազգային նախաձեռնություն ՀԿ
 Քաղաքացիական նախաձեռնությունների աջակցման կենտրոն ՀԿ
 Երեխաների աջակցության հիմնադրամ
 Քաղաքացիական ֆորում ՀԿ
 Տարածաշրջանային հետազոտությունների կենտրոն հիմնադրամ
 Խոսքի ազատության պաշտպանության կոմիտե
 «Ժողովրդավարություն եւ ընտրական գործընթացներ» ՀԿ
 «Ֆերմերային շարժում» ՀԿ
 Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ
 Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ
 «Ներդաշնակ հասարակություն» սոցիալական աշխատողների հայկական ասոցիացիա
 «Իրավունքի գերակայություն» իրավապաշտպան ՀԿ
 «ՈւրբանԼաբ-Երեւան» ճարտարապետների լաբորատորիա
 Կանանց ռեսուրսային կենտրոն
 Սոցիալ-մշակութային իննտվացիաների լաբորատորիա բարեգործական հիմնադրամ
 «Ազատ համալսարան» հիմնադրամ
 «ԽորանԱրդ» ինտելեկտուալ կենտրոն ՀԿ
 «Բիոսոֆիա» առողջապահության, բնապահպանության և գյուղատնտեսության զարգացման
 կենտրոն
 Ա.Դ.Սախարովի անվան մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոնի
 Շիրակի մասնաճյուղ
 «Լրագրողներ հանուն ապագայի» ՀԿ